# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստ
## (N 11)

05 օգոստոսի 2011թ. ժամը $15^{00}$

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատա-կարարաման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն » օժանդակ ծրագրի մասին:
(Սոս Գևորգյան)

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին:
(Արսեն (Տեր-Հովել) Գամաղելյան)

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագրի մասին:
(Արսեն (Տեր-Հովել) Գամաղելյան)

4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում» օժանդակ ծրագրի մասին:
(Արսեն (Տեր-Հովել) Գամաղելյան

5. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին:
(Արսեն (Տեր-Հովել) Գամաղելյան)

6. «Կազա» Շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերակառուցում» ծրագրի մասին:
(Իրինա Նալբանդյան)

7. «Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի միջնակարգ դպրոցի սանհանգույցների վերանորոգում » ծրագրի մասին:
(Շաղիկ Մարուխյան)

8. «Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ապարանի Ռաֆիկ Եղիազարյանի անվան N 1 դպրոցի սանհանգույցների վերանորոգում » ծրագրի մասին:
(Լիանա Սարգսյան)

9. «Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում խաղասարքերի տեղադրում » ծրագրի մասին:
(Լիանա Սարգսյան)



10. «Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում շինանյութի տեղադրում » ծրագրի մասին:
(Լիանա Սարգսյան)

### 11. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

11.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

11.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:(N1)

11.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:(N2)

11.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԱԿ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին :(N2)

11.5 Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին :

11.6 «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

11.7 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին: (N 1)

11.8 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին: (N 4)

11.9 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին: (N 5)

11.10 «Հայաստանի բադմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

11.11 «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

11.12 «Առդա» բարեգործական հիմնադրամի կողմց իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին :

11.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ):

11.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) (N 1):

11.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

11.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

11.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ): (N1)

11.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

11.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

**12. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

12.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ



հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) (N 1):

12.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-493-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության» հիմնադրամ):

12.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի N Մ-644-Ա և N Մ-647-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն):

12.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

12.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):

12.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-933-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

12.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշման կից ծրագրում փոփոխություն և լրացում կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլոզի կառավարում ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (N 2):

12.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):

12.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մատենադարան» հիմնադրամ):

12.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

12.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

12.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

12.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-492-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-504-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-506-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-507-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

12.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-508-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

11/1

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՆՔ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԺԱՆԱՐԱՐ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N 3/3-4/ -11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 170000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջրմուղ-Կոյուղի նախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525782) 2011 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-12/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 170000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«25» հուլիսի 2011թ.

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողության օժանդակ**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղ, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 170.000,00 (Մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի համայնքը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հուլիսի 15 -ից մինչեւ 2011թ.հոկտեմբերի 14-ը: |

11/1

| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ջրմուղ-Կոյուղի Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն՝ 170.000,00 (Մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

11/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

11/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.07.11 № 3/38-1/82376-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.07.11թ. N 15/15.1/12575-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ պայմանագրում նշված չէ պայմանագրի արժեքը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/23595-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

11/1

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

4640-11
28.07.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի
26-ի 15/15.1/12575-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/23514-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

11/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3/3-4/5377-11
29.07.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.07.2011թ. թիվ 15/15.1/12575-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

????? ?????????
Jul 28 2011 6:30 AM

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/23613-11

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

11/1

*ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՂՀՀ-12/11*
*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման»*

Հայաստանի Հանրապետություն
ք. Երեւան

«15» հուլիսի 2011թ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արա Վարդանյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Ջրմուղ-Կոյուղի Նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Եգանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## *1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

1.1 «Կատարողը» պարտավորվում է «Պատվիրատուի» հանձնարարությամբ իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության աշխատանքները (հետագա տեքստում՝ «Ծառայություն»), իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել դրա դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով:

1.2. Ծառայությունների ցանկը սահմանվում, բայց չի սահմանափակվում սույն պայմանագրի 2.4 կետում նշված աշխատանքներով:

## *2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

### *2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը:

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից Ծառայությունը մատուցվում է ոչ պատշաճ:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և

Ծառայությունների նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում և չվճարել ոչ պատշաճ մատուցված Ծառայության դիմաց:

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և վճարել փաստացի կատարված աշխատանքների համար:

### *2.2 Պատվիրատուն պարտավոր է՝*

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրով նախատեսված Ծառայության արդյունքը, իսկ



Ա. Վարդանյան
ՀՀՀ-ի Գործադիր տնօրեն

Գ. Եգանյան
«Ջրմուղ-Կոյուղի Նախագիծ» ՍՊԸ - ի տնօրեն

11/1

Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել սույն պայմանագրով սահմանված չափի գումար:

### *2.3 Կատարողն իրավունք ունի՝*

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի մատուցված Ծառայության դիմաց, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից, այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

### *2.4 Կատարողը պարտավոր է՝*

2.4.1 Սույն պայմանագրի սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պատվիրատուին ներկայացնել հեղինակային հսկողություն իրականացնող աշխատակիցների ցուցակը՝ նշելով հեղինակային խմբի ղեկավարին,

2.4.3 Հետևել քաղաքաշինական օբյեկտի իրականացման համապատասխանությանը հաստատված նախագծի պահանջներին ու լուծումներին

2.4.4 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը:

2.4.5 Կապալառուի կողմից նախագծային լուծումներից կատարված շեղումներ հայտնաբերելու դեպքում՝ սահմանված կարգով գրանցել դրանք և այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Պատվիրատուին:

2.4.6 Մեկնել կառուցվող օբյեկտ յուրաքանչյուր շաբաթ առնվազն մեկ անգամ, ինչպես նաև Պատվիրատուի հատուկ կանչով:

2.4.7 Ժամանակին լուծել նախագծին վերաբերվող՝ շինարարության ժամանակ ծագած հարցերը, համաձայնեցնելով այն Պատվիրատուի հետ:

## *3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ*

3.1 Ծառայությունը Կատարողի կողմից մատուցված է համարվում շինարարության ավարտը սահմանված կարգով ձևակերպելու պահից:

## *4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ*

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության գինը կազմում 170.000,00 (Մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի, որը հետագայում չի կարող ավելացվել, սակայն կարող է նվազեցվել՝ Կապալառուի կատարած աշխատանքի փաստացի գնի նվազելու դեպքում: Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Պատվիրատուն Կատարողին վճարում է Կապալառուի կողմից կատարած աշխատանքների հեղինակային հսկողության համար Կատարողի կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից



Ա. Վարդանյան
ՀՀՀ-ի Գործադիր տնօրեն

Գ. Եգանյան
«Ջրմուղ-Կոյուղի Նախագիծ» ՍՊԸ - ի տնօրեն

հաստատված ակտերի դիմաց: Կապալառուի իրականացրած աշխատանքները հաստատվում են Կապալառուի կողմից ներկայացրած և տեխ. հսկողի կողմից հաստատված ակտերի հիման վրա:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.4. Կատարողի հետ վերջնահաշվարկը կատարվում է շինարարության ավարտը սահմանված կարգով ձևակերպելուց հետո՝ 20 (քսան) բանկային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում, ինչպես նաև Կատարողի կողմից իր պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու այլ դեպքերում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 30 %-ի չափով:

5.3.Սույն պայմանագրի 2.4.5 կետով ստանձնած իր պարտավորությունը չկատարելու դեպքում, եթե դա հանգեցրել է Կապալառուի աշխատանքի արդյունքում թերությունների առաջացմանը, Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 20 %-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:



7.2 Սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է «15» հուլիսի 2011թ. մինչև «14» հոկտեմբերի 2011թ.:

7.3 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
7.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*«Պատվիրատու»*

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան Կառավարական 3-րդ մասնաշենք
Հայաստանի Կենտրոնական բանկ
Հ/Հ 103003215672
ՀՎՀՀ 02507456

*«Կատարող»*

«Ջրմուղ-Կոյուղի Նախագիծ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աբովյան 66/ա
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 160485165510
ՀՎՀՀ 01525782

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն
______________ ստորագրություն կ.տ

Արարատ Խլղաթյան
ՀՀՀ-ի փոխտնօրեն ______________ ստորագրություն

Գագիկ Եգանյան
Տնօրեն
______________

11/1

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջրամատակարարման ներքին բաժանարար ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 29.07.11, N 3/3.8-1/82376-11 | |
| 1. Պայմանագրում նշված չէ պայմանագրի արժեքը | 1. Պայմանագրի արժեքը նշված է 4.1 կետում (պայմանագիրը կցվում է) |

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

11/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ հուլիսի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 01/-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/ -11 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2011 թվականի հուլիսի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1.712.891.860 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ՀՎՀՀ՝ 00250089) 2011 թվականի մայիսի 27-ին կնքված՝ N 08Ծ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացում՝ 1.622.891.860 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Էջմիածնի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 3-ին կնքված N 10002082749 պայմանագրում նշված գործարքը (2011 թվականի հուլիսի 9-ին կնքված Լրացուցիչ համաձայնագրի խմբագրությամբ) որով նախատեսվում է գազի մատակարարում՝ 90.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11/2

3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ [illegible]ՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ [illegible] ԿՈՂՄԻՑ
«14» ______ 2011 թ.

11/2

Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցման

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կառուցել Գարեգին Ա Կրթական կենտրոնի շենքը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում քահանայից լսարանի կազմակերպման համար |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք |
| 6. | Ծրագրի բյուջեն | **Ծրագրի ընդհանուր բյուջեն 1,712,891,860 ՀՀ դրամ է, որից՝**<br>2011թ. – 260,062,860 դր., 2012թ. – 1042,120,000 դր., 2013թ. – 410,708,000 դր.: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռը, միաբանները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 25 հուլիսի 2011թ. – 31 դեկտեմբերի 2013թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կրթական կենտրոնի կառուցում՝ 1 622 891 860 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Վ.Համբարձումյան 10 շենք, 22 բն., ՀՎՀՀ 00250089), պայմանագիր թիվ 08Շ/011, կնքված 27.05.2011թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կառուցել կրթական կենտրոն՝ 38 ննջասենյակներ և 7 լսարաններ, մեծ հանդիսությունների դահլիճ, վարչական սենյակներ և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի թանգարանային սրահ: Կառույցը կազմված է մեկհարկանի հին Խրիմյան հիվանդանոցի մասնաշենքից և մեկ ընդհանուր բակի շուրջը պարագծով փակող նոր երկհարկանի երեք մասնաշենքերից: Ամբողջ կառույցը հատակագծով 60մx54մ չափերի է, առավելագույն բարձրությունը 8մ: Կառույցը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կոնստրուկցիաներով, Արմավիրի տուֆ քարի երեսապատմամբ, իսկ տանիքը պղնձե թիթեղով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Գազի ծախս՝ 90 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 45 000 000 դրամ, 2013թ. – 45 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 10002082749, կնքված 03.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայռուսգազարդ» ՓԲԸ Էջմիածնի ԳԳՄ-ի միջև:<br>Կազմակերպական ծախսերը կազմում են ծրագրի ընդհանուր բյուջեի 5,25%-ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
Մարինե Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

11/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.07.11թ № 3/3.8-1/81887-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.11թ. N 15/15.8/12029-11 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/22703-11
21.07.2011թ

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

11/2

N 01/4448-11
20.07.2011թ

0078 Երևան, Հալաբյան 41ª, հեռ. 380389
Էլ. փոստ՝ press@moj.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի
19-ի 15/15.8/12029-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

035/22542-11
20.07.2011թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

11/2

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

22.07.11 N 01/13.2/3540-11

ՁերN------------- առ---------------------------

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի հուլիսի 19-ի N 15/15.8/12029-11 գրությամբ ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ.Վարդանյան

Ե.Աթայան
52-46-80

027/22854-11
22.07.2011թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

11/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ԱԱ/3-4/5114-11
21.07.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.8/12029-11 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22624-11
21.07.2011թ

| | | |
|---|---|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** | | **РЕСПУБЛИКА АРМЕНИЯ** |
| **ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ** | | **МАРЗПЕТ АРМАВИРА** |

11/2

<< 25 >> հուլիսի 2011թ. N 01/04.2/2248-11

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.8/12029-11գրության՝ հայտնվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը հավանություն է տալիս վերը նշված ծրագիրը բարեգործական որակելուն:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Կատ՝. Կ.Դանիելյան

112/22333-11
25.07.2011թ

1201/ԿՀ02

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

_____ **հուլիսի 2011 թվականի N Մ- -Ա** 11/3

**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԿՐՏԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 01/-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի –ի, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/ -11 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2011 թվականի հուլիսի –ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 30.483.830 դրամ արժողությամբ «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Ա. Ավետիսյան 118, ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի հունիսի 23-ին կնքված՝ N 09Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտարանին կից տարածքի բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 30.483.830 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»

11/3

Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏ[illegible]

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

« 14 » ______ 2011 թ.

Մկրտարանին կից տարածքի բարեկարգման

ԾՐԱԳԻՐ

11/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մկրտարանին կից տարածքի քայքայված սալահատակը քանդել և նոր բազալտե սալերով մայթ պատրաստել |
| 2 | Ծրագրի բարեգործական դրական նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածք |
| 6. | Ծրագրի բյուջեն | 30 483 830 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հուլիսի 2011թ. – 31 դեկտեմբերի 2011թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մկրտարանին կից տարածքի բարեկարգում՝ 30 483 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Նորոգման աշխատանքերն իրականացվում են «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Ա.Ավետիսյան 118, ՀՎՀՀ 00801721), պայմանագիր թիվ 09Շ/011, կնքված 23.06.2011թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մկրտարանին կից տարածքի 400քմ հին սալահատակը քանդել և նոր բազալտե սալահատակ պատրաստել՝ 30 483 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքերի մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Գլխավոր ճարտարապետ՝

Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝

Մարինե Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

11/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.07.11թ №3/38-1/81983-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.11թ. N 15/15.8/12026-11 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Մկրտարանին կից տարածքի բարեկարգում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/22704-11
21.07.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

11/3

N: 01/4451-11
20.07.2011թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ՝ press@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի
19-ի 15/15.8/12026-11 թվակիր հանձնարարականի

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

035/22538-11
20.07.2011թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

11/3

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

22.07.11թ N 01/13.2/3539-11

ՁերN-------------առ---------------------------

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի հուլիսի 19-ի N 15/15.8/12026-11 գրությամբ ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ.Վարդանյան

Ե.Աթայան
52-46-80

027/22896-11
22.07.2011թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

11/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ԱԱ/3-4/5115-11
21.07.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.8/12026-11 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22823-11
21.07.2011թ

1202

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** | **РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**

11/3

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ** | **МАРЗПЕТ АРМАВИРА**

<< 25 >> հուլիսի 2011թ. N 01/04.2/2244-11

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.8/12026-11 գրության՝ հայտնվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը հավանություն է տալիս վերը նշված ծրագիրը բարեգործական որակելուն:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Կատ՝. Կ.Դանիելյան

112/22382-11
25.07.2011թ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11/4

_____ հուլիսի 2011 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՃԱՂԱՇԱՐԵՐԻ ԵՎ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 01/-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի –ի, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/ -11 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2011 թվականի հուլիսի –ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 8.863.280 դրամ արժողությամբ «Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Անհատ ձեռնարկատեր Հավհաննես Կասաբյանի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ, 1144, ՀՎՀՀ՝ 52172178) 2011 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 11Ճ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք ամսվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանական շենքի հյուսիսային ճակատի նկուղային հարկի պատուհանների ճաղաշարերի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2.022.080 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) Անհատ ձեռնարկատեր Հավհաննես Կասաբյանի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ, 1144, ՀՎՀՀ՝ 52172178) 2011 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ N 13Ճ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 40 օրվա ընթացքում Մայր Աթոռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

11/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.07.11թ №3/3.8-1/81380-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.11թ. N 15/15.8/12025-11 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/22705-11
21.07.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

11/4

№ 01/4448-11
20.07.2011թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
էլ. փոստ՝ press@moj.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի
19-ի 15/15.8/12025-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

035/22543-11
20.07.2011թ

11/4

Սուրբ Էջմիածնի Միաբանական շենքի երթանցների մետաղական երեք դարպասների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6.841.200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«14» հուլիսի 2011թ.

11/4

Ճաղաշարերի և դարպասների պատրաստման և տեղադրման

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
